ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

Կարեն Հովսեփյան, Արմեն Հովհաննիսյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի վարչության վերականգնվող էներգետիկայի բաժնի գլխավոր մասնագետ և էներգետիկ ենթակառուցվածքների բաժնի գլխավոր մասնագետ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ**

Գերմանիայի Դաշնային Հանրապետություն, (Բավարիա), 2024թ. նոյեմբերի 17-ից մինչև նոյեմբերի 22-ը ներառյալ

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն (GIZ)

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

Մասնակցություն 2024թ. նոյեմբերի 17-ից մինչև նոյեմբերի 22-ը ներառյալ կայացած «Ապագայի հզորացում՝ ուսումնասիրելով Բավարիայի էներգետիկ անցումը և ճամփորդություն դեպի էներգետիկ ինքնաբավություն և վերականգնվող նորարարություն» խորագրով ուսումնական այցին:

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

Բացման խոսքում GIZ-ի կողմից կարևորվել են գործադրվող ջանքերը վերականգնվող էներգետիկայի ոլորտում քաղաքականության բարելավման և նախանշված նպատակներին հասնելու հարցում:

Կ. Հովսեփյանի կողմից շնորհանդեսի տեսքով ներկայացվել է տեղեկատվություն ՀՀ էներգետիկայի բնագավառի դրվածքային հզորությունների, վերականգնվող էներգետիկայի ոլորտի ընթացիկ վիճակի, ինքնավար էներգաարտադրության ոլորտում գրանցված նշանակալի արդյունքների (շուրջ 384 ՄՎտ տեղակայված հզորություն), էներգետիկայի բնագավառում ՀՀ կառավարության տեսլականի, ինչպես նաև վերականգնվող էներգետիկայի հզորությունների առաջանցիկ տեմպերով աճի դեպքում էներգահամակարգի առջև ծառացած մարտահրավերների մասին:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

Ուսումնական այցի շրջանակներում կազմակերպվել են այցեր դեպի Բավարիա երկրամասի ինքնաբավ էներգետիկ համայնքներ (Feldafing, Starnberg, Wilpondsried, Regensburg, Memmingen), որտեղ ներկայացվել է իրենց հաջողված փորձը, կազմակերպա-իրավական միավորումների ձևերը, վերոնշյալ համայնքների

բնակչությանն ընդհանուր էներգետիկ նպատակներին հասնելու ներգրավվածության մեխանիզմները, ինչպես նաև վերահաստատվել է Հայաստանի Հանրապետության հետ արդյունավետ համագործակցություն ծավալելու պատրաստակամությունը:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Ուսումնական այցի ավարտին կազմակերպիչների կողմից շեշտվել է կարևորությունը ապահովելու սույն նախաձեռնության շարունակականությունը՝ վերականգնվող էներգետիկայի խթանման ապահովման համատեքստում երկկողմ և բազմակողմ համագործակցությունը խորացնելու անհրաժեշտությունը, միաժամանակ ձեռք է բերվել պայմանավորվածություն սույն այցի արդյունքների ամփոփումն իրականացնել Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության հետ տարվող շարունակական համագործակցության շրջանակներում:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հայկական կողմից առաջարկվել է գերմանացի գործընկերներին պատասխան այցով գալ Հայաստան:

Ըստ անհրաժեշտության փոխանակվել տեղեկատվությամբ, կազմակերպել ուսումնական այցեր և քննարկումներ:

ՀՀ ՏԿԵՆ էներգետիկայի վարչության վերականգնվող էներգետիկայի բաժնի գլխավոր մասնագետ — Կարեն Հովսեփյան

ՀՀ ՏԿԵՆ էներգետիկայի վարչության էներգետիկ ենթակառուցվածքների բաժնի գլխավոր մասնագետ — Արմեն Հովհաննիսյան